Դատավարական

Այն դեպքում, երբ անձը վիճարկում է ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը.

1) **դիմումի ընդունումը մերժվում է, եթե տվյալ նորմատիվ իրավական ակտը չի կիրառվել դիմողի նկատմամբ,**
2) դիմումի ընդունումը մերժվում է անկախ դիմողի նկատմամբ տվյալ նորմատիվ ակտի կիրառված լինելու հանգամանքից,
3) դիմումն ընդունվում է վարույթ և գործն ըստ էության քննվում է՝ անկախ դիմողի նկատմամբ տվյալ նորմատիվ իրավական ակտի կիրառված չլինելու հանգամանքից,
4) ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու հնարավորություն:

Նյութական

Արդյո՞ք վարչական բողոք բերելը կասեցնում է վարչական ակտի կատարումը.

1) վարչական բողոք բերելը չի կասեցնում վարչական ակտի կատարումը,
2) վարչական բողոք բերելը կասեցնում է վարչական ակտի կատարումը,
3) **վարչական բողոք բերելը կասեցնում է վարչական ակտի կատարումը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,**
4) վարչական բողոքը բերելը կասեցնում է վարչական ակտի կատարումը միայն օրենքով նախատեսված դեպքերում: